դանկատէր Պետրոս Պատրիարք վասն Իւսկիւտարի վանացս, որոյ տարապայման ծախքն 'ի Ս. Աթոռոյն ելանէր, (1794)։

Առաքաւոր նաեւ ուխտաւորաց Հայոց 'ի Զմիւռնիոյ՝ յորում էին ոգիք իրրեւ 60, եհաս 'ի Շամ Թարասալուս՝ յ2 Յունվարի, եւ 'ի առաւիկ ալէկոծութենէ ծովուն խզեցաւ պարան, և մրրիկն ընկեց զնաւն 'ի ցամաք հեռի 'ի քաղաքէն ժամս 9 և խորտակեցաւ, և մեռան անձինք 8. և ամենայն ինչ որք էին 'ի նաւին՝ կորեան, եւ ոգիք 32 ապրեալք 'ի ծովէ, տարակուսեալ թափառէին 'ի Թարասալուս քաղաքի. լուեալ զայս Պետրոս Պատրիարքի՝ առաքեաց անդ զարս ոմանս, և ժողովեալ ափոփեաց և ետ բերել զնոսա յերուսաղէմ, հոգալով զամենայն պէտս նոցին, մինչ 'ի վերադարձ յերկիր իւրեանց։

Գլխաւորք երից վանօրէից միաբան խորհրդով գրեցին 'ի Կոստանդինուպոլիս, Լատինք առ Դեսպանն Գաղղիոյ, Հայք և Յոյնք առ Պատրիարքունս և առ գործակատարս իւրեանց. զի ժողովեսցին առ Դեսպանն եւ միաբանութեամբ խնդրեսցեն Թատոսցի յԱհմէտ աղայէ՝ հանել հրովարտակ և առաքել առ մտերիմն իւր Մաքսապետն Յակոբէյի՝ Ալի ազա, զի ծախիւք երից աղգաց և ձեռամբ նորին չինեսցի երկաթապատ արտաքին մեծ դուռն տաճարին Ս. Յարութեան, զի այնպէս միաբանեալ և տահմանեալ էին յառաջագոյն 'ի միջի իւրեանց, զի դուռն գոլով փայտեայ էր հնացեալ՝ և յառաջագոյն թշնամիք ոմանք հուր եդեալ էին 'ի գիշերի առ 'ի այրել զնա, այլ իմացեալ քրիստոնէից փութանակի չիջուցին զայն։

Այլազգիք երուսաղէմի՝ և մանաւանդ Սիոնի, ոչ միայն բռնացեալ 'ի վերայ վանօրէից ալէսպէս տառապանօք նեղէին զնոսա, այլ բազում անգամ դիմեալ 'ի Բիւզանդիոն բողոք բառնային 'ի Դուռն և բարբանօք զրպարտէին զերուսաղէմի, և առեալ հրովարտակ ինչ եկեալ բռնանային 'ի վերայ նոցա, և տային ձնաս և նեղութիւն. որոց յերեսաց տաղտկացեալ՝ միաբանութեամբ գրեցին գլխաւորք երից վանօրէից 'ի Կոստանդինուպոլիս առ գործակատարս իւրեանց՝ դարման տանել իրաց, և կամ հանել հրովարտակ առ 'ի զսպել զայլերատութիւնն նոցա։